Հանրապետա
Մանկավարժահոգեբանական Կենտրոն
«Հանրկրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականներիդասավանդման հմտությունների
զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ՝ ԱՇԽԱՏԱՆՔ

Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոց,

Առարկա՝ Ռուսաց լեզու

Թեմա՝ Լեզվական կարողունակությունը՝ որպես հմտություն

Վերապատրաստող, մենթոր՝ Արարատ Մովսեսյան

Ուսուցիչ՝ Նատալյա Խաչատրյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ: Լեզվական գրագիտությանկարողունակությունների նկարագրիչները և վերջնարդյունքները _____6

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ:Լեզվական կարողունակության ձևավորման մեթոդական մոտեցումները_____

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ----------12

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....13

Յուրաքանչյուր մարդ իր գիտակից կյանքում իր առաջին բառերը ասում է մայրենի լեզվով,ասում է սկզբից թոթով լեզվով,հետո տարիների ընթացքում ավելի հստակ ու վարահ՝ ընդլայնելով բառապաշարի եզրերն ու խորությունը։Դպրոց մտնելու առաջին օրից երեխան իր համար բացում է լեզվի զարմանահրաշ գրքի մի նոր էջ,հարստացնում բառապաշարը սովորում քերականական կանոններ ,ուղղագրության և ուղղախոսության ։Մայրենի լեզվին զուգնթաց սովորում են օտար լեզուներ,սովորում հաղորդակցվել նաև այդ լեզուներով։Դպրոցում երեխային սովորեցնում են գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվել մայրենի և ուսուցանվող օտար լեզվով։Դա դպրոցում ուսուցիչների ներկայությամբ և օգնությամբ ։Դրանից հետո երեխան հայտնվում է այլ միջավայրում ՝բակ,ընտանիք ,արտադպրոցական խմբակներ,լրացուցիչ պարապմունքներ ,և դժվար է պատկերացնել ,որ այդ միջավայրերում երեխան և նրան շրջապատող միջավայրը անհանգստացնում են լեզվի մաքրության հարցով։

Ներածություն

Այժմյան մարդկությունը հայտնվել է մի շարք մարտահրավերների առաջ. հասարակական (կլիմայի փոփոխություն, ֆինանսական անկայություն, պանդեմիաներ և այլն), տնտեսական (գլոբալիզացիա, նորարարություն և այլն) և անհատական մակարդակներում (աշխատանքի ընդունվելու հնարավորություն, գաղտնիություն, կատարողականություն)[1] Տեխնոլոգիաների էքսպոնենցիալ աճն արագորեն բարդացնում է պրոբլեմները շնորհիվ ավտոմատացման և խնդիրների օֆշորինգի, առաջացնելով հասարակական լարվածություն: Կրթությունը հետ է մնում տեխնոլոգիական առաջընթացի տեմպերից, ինչպես դա եղել է Ինդուստրիալ հեղափոխության1 ժամանակ: Կրթական ծրագրերի2 վերջին մեծ փոփոխությունը կատարվել է 1800-ականներին՝ պայմանավորված հասարակական և մարդկային կապիտալի կարիքների կտրուկ աճով: Քանի որ 21-րդ դարի աշխարհը էականորեն տարբերվում է նախկինից, կրթական ծրագրերն ըստ այդմ պետք է ենթարկվեն խոշոր փոփոխությունների, ընգծելով խորությունն ու ճկունությունը: Աշխարհում ուսումնական պլանները, իհարկե, երբեմն զգալիորեն շտկվել են, բայց երբևէ չեն վերափոխվել խորապես ըստ կրթության բոլոր չափայնությունների՝ Գիտելիք, Հմտություններ, Բնավորություն և Մետաուսուցում: 21-րդ դարի կարիքներին հարմարվելը նշանակում է վերանայել յուրաքանչյուր հարթությունը և դրանց փոխազդեցությունը:

Մեր հետազոտության թեման է լեզվական կարողունակությունը՝ որպես հմտություն: Ուսումնասիրության շրջանակում անդրադառնալու ենք հանրակրթության պետական չափորոշչով սահմանված 8 կարողունակություններից լեզվական գրագիտությանը և կարողունակությունը: Հանրակրթական պետական չափորոշչում լեզվական գրագիտությունը և կարողունակությունը ներկայացվում է հետևյալ կերպ.

«Սովորողները տիրապետում են հայոց լեզվին, գրավոր և բանավոր կերպով գրագետ հաղորդակցվում են մայրենի լեզվով և այլ օտար լեզուներով՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Նրանք կիրառում են լեզուն՝ որպես ուսումնառության և հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք: Ընդհանուր գրագիտությունը կազմում է սովորելու և լեզվական հաղորդակցության հիմքը, որի հիման վրա կարող են ձևավորվել գրագիտության մյուս ձևերը (քաղաքացիական,

բնապահպանական, տնտեսական, ֆինանսական, իրավական, առողջապահական, գիտատեխնիկական, թվային և այլն): Սովորողներն ընդունակ են բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր»:

Հայաստանի Հանրապետության դպրոցներում սովորողների ուսումնառության, տարբեր սոցցանցերում հաղորդակցման մակարդակի, հեռուստատեսության և ԶԼՄ -երի լեզվի վերլուծությունը վկայում է, որ լեզվական գրագիտության խնդիրը օրեցօր ավելի ու ավելի առաջնահերթ է դառնում: Լեզվական գրագիտությունը համապիտանի կարողունակություն է Այն լիարժեք դրսևորվում է ոչ միայն բոլոր առարկաների ուսումնական գործընթացում, այլև մեր հասարակության բոլոր ոլորտներում: Շատ հաճախ բազմաթիվ թյուրըմբռնումներ են առաջանում լեզվի ոչ գրագետ կիրառության պատճառով: Լեզվական գրագիտությունը պահանջում է և՛ այնպիսի բառապաշար, որ բառիմաստի շփոթություններ չառաջանան, և՛ պատկերավոր խոսքի տիրապետում՝ լսարան գրավելու և խոսքը ճիշտ տեղ հասցնելու համար, և՛ փաստարկված, հիմնավորված դիրքորոշման դրսևորում՝ ասելիքը անառարկելի մատուցելու կամ առողջ քննարկման դնելու նպատակով:

Լեզվական գրագիտության կարողունակության կարևորության շեշտադրումը կնպաստի, որ այն հանրային պահանջարկ դառնա, և ցանկացած ոլորտում անհատի կայացումը կախված լինի նրանից, թե որքանով է տիրապետում իր մայրենի լեզվին: Նման մոտեցումը պիտի ամենուրեք աչքի ընկնի լեզվական գրագիտության և կարողունակություններ ունեցող շրջանավարտներ կրթելու քաղաքականության շարունակական դրսևորումներով:

Այժմ ամենուրեք փնտրված են արհեստավարժ մասնագետները, իսկ արհեստավարժության առաջին ցուցիչը տվյալ ոլորտում կարողունակ լինելն է: Եվ դա ակնառու դրսևորվում է լեզվական գրագիտությամբ: Այն ձևավորվում է տարրական, հիմնական և միջնակարգ կրթության աստիճաններում:

Աշխատանքում ուսումնասիրում եմ լեզվական կարողունակությունը ՝ որպես հմտություն, դասավանդման հմտություններն ու դասավանդման մեթոդիկան: Աշխատանքի շրջանակներում խոսելու ենք ինչպես և ինչ մեթոդներով սովորողները տիրապետեն այլ օտար լեզուներով գրավոր և բանավոր հաղորդակցմանը՝ ըստ լեզվական կանոնների և իրավիճակների: Սովորողներն ընդունակ լինեն բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր, փաստեր և կարծիքներ՝ օգտագործելով տարբեր առարկաներին և իրավիճակներին առնչվող տեսողական, ձայնային և թվային նյութեր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ Է բացահայտել լեզվական կարողունակությունը՝ որպես հմտություն թեմայի

առանձնահատկությունները

արդիականությունը

արդյունավետությունը

Վերը նշված նպատակներից բխող խնդիրներն են՝

Բացահայտել ի՞նչ է դասը և ինչպե՞ս է հնարավոր լավագույնս կազմապերպել այն:

Բացահայտել թեմայի ուսումնասիրության կարևորությունը և արդիականությունը մեր օրերում:

Փորձել առանձնացնել այն մեթոդները, որոնք լավագույնս կհամապատասխանեն թեմայի ուսումնասիրությանը տարրական և միջին դասարաններում աշակերտների հետ աշխատելիս, նրանց տարիքային առանձնահատկություններին համապատասխան:

Աշխատանքի սուբյեկտն ու օբյեկտը: Աշխատանքի սուբյեկտը Լեզվական կարողունակություն թեմայի դասավանդումն է ժամանակակից հանրակրթական տարրական և միջին դպրոցներում, իսկ օբյեկտը այն մեթոդների համախումբն է, որոնց միջոցով կազմակերպվում է այս թեմայի դասավանդումը:

Հետազոտության մեթոդներ: Օգտագործել ենք լեզվաբանական, վերլուծական, համադրման, հարցման, քննարկման մեթոդները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ:Լեզվական գրագիտության և կարողունակության նկարագրիչները և վերջնարդյուքնները

Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ութ կարողունակություններից է Լեզվական գրագիտություն կարողունակությունը:

Լեզվական գրագիտությու կարողունակության նկարագրիչներն են.

Գիտելիք՝

- Ճանաչի և գործածի մենիմաստ և բազմիմաստ բառեր, նրանց ուղիղ և փոխաբերական իմաստները
- Տարբերակի և կիրառի բառերի ձևաիմաստային տեսակներ (հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն) և դարձվածքները:
- Օգտվի տարբեր տեսակի բառարաններից ըստ նպատակի (բացատրական, թարգմանական, դարձվածաբանական, հոմանշային)
- Ճանաչի խոսքի մասերի և նախադասության անդամների քերականական հատկանիշները, տարբերակի և կիրառի խոսքում:
- Զևափոխի (հոլով, հոդ, թիվ, խոնարհում) խոսքի մասերը և նախադասության անդամները կանոններին համապատասխան, ըստ անհրաժեշտության և ճիշտ ձևափոխություններով կիրառի խոսքում
- Իմանա կետադրական որոշ կանոններ և կետադրի տարաբնույթ տեքստեր:
- Տարբերի ոճերը, կիրառի համապատասխան բառապաշար:

Հմտություն՝

- Կարդա ուղղախոսական կանոններին համապատասխան
- Գրի ուղղագրական կանոններին համապատասխան
- Խոսի ուղղախոսական կանոններին համապատասխան
- Նորովի վերարտադրի լսածը, ընթերցածը, դիտածը
- Ստեղծի բանավոր և գրավոր պատկերավոր խոսք /առանձին և խմբային/, արձակ և չափածո պատմություններ՝ օգտագործելով տարաբնույթ նշաններ /կոմիքս, էմոջի, ծաղրանկար և այլն/:
- Սկսի, շարունակի և ավարտի պատմությունը, զարգացնի այն՝ շարունակելով ներսից կամ վերջից:

Չափորոշչով սահմանված են նաև լեզվական կարողուանկության վերջնարդյուքնները:

- Ստեղծի տարաբնույթ ուսումնական ցուցադրական նյութեր՝ պաստառ, գրքույկ, ուղեցույց, սահիկաշար, անիմացիա, տեսանյութ և այլն:
- Պատմի լսածի, տեսածի, զգացածի մասին, նկարագրի մարդկանց, երևույթներ, առարկաներ, դեպքեր, իրադարձություններ:
- Ընթերցի տեքստը պահանջվող հնչերանգով, վերարտադրի, հարցեր առաջադրի, պատասխանի դրանց, մեկնաբանի, փոխանցի զգացողություններ, ակնհայտ գաղափար:
- Ելույթ ունենա լսարանի առջև ազատ, անկաշկանդ, գրագետ՝ օգտագործելով համապատասխան կառույցներ և բառապաշար:

Դիրքորոշում/արժեք

- Համագործակցի ընկերների հետ՝ պաշտպանելով սեփական տեսակետն ու դիրքորոշումը:
- Տարբեր դերեր ստանձնի և հաջողությամբ իրականացնի:
- Գրավոր և բանավոր խոսքում իր վերաբերմունքն արտահայտի տեքստի, իրադրության, խոսքի նկատմամբ:
- Հաղորդակցվելիս հարգալից վերաբերմունք դրսևորի լեզվի, հասակակիցների և այլոց նկատմամբ, լինի պատասխանատու, շրջահայաց, հանդուրժող:
- Արժևորի մայրենի լեզվի դերը հասկանալի դառնալու և մտքերը տեղ հասցնելու գործում:
- Հասկանա և գնահատի մայրենի լեզուն՝ որպես սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր գործոն:
- Արժևորի այլոց իրավունքներն ու դիրքորոշումը:
- Կատարի թարգմանություններ և արժևորի մայրենի լեզվի բառակազմական հնարավորություններն ու քերականական ճկունությունը թարգմանական գրականության մեջ:

Հանրակրթության պետական չափորոշչով (ՀՊՉ) սահմանված կարողունակությունները (այդ թվում նաև լեզվական կարողունակությունը) ձևավորելու նպատակով սահմանված են համապատասխան վերջնարդյունքներ:

Հանրակրթության տարրական ծրագրի շրջանավարտի ուսումնարության արդյունքում լեզվական կարողունակության ձևավորման ակնկալվող վերջնարդյունքները ըստ հանրակրթության պետական չափորոշչի՝

- Գրավոր և բանավոր հաղորդակցվի օտար լեզվով, կարդա, հասկանա, վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր , ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը:
- Ճանաչի իր հայրենիքը, ներկայացնի տեղեկություններ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին ռուսաց լեզվով,
- Ճանաչի և հարգի Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները և ներկայացնի պետական և ավանդական տոների հիմնական բովանդականությունը ռուսերենով,
- Ստեղծի ընկերական հարաբերություններ, լսի հասկանա, ապրումակցի, քաջալերի և աջակցի մյուսներին, համագործակցի տարբեր ձևաչափով, դրսևորի դրական վերաբերմունք, ձգտի կոնֆլիկտների խաղաղ լուծմանը:
- Ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, կիրառի դրանք աշխարհաճանաչողության գործում,
- Արտահայտի սեփական մտքերը , զգացմունքները, կարծիքները և ցանկությունները, գիտակցի իր յուրահատուկ լինելը:

Հանրակրթական միջնակարգ ծրագրի շրջանավարտի ուսումնառության արդյունքում լեզվական կարողունակության ձևավորման ակնկալվող վերջնարդյունքները ըստ հանրակրթության պետական չափորոշչի:

Ըստ տարրական, հիմնական և միջնակարգ կրթական աստիճանների՝ վերջնարդյունքները հիմնականում ներկայացված են շարունակական զարգացման սկզբունքով:

Օրինակ՝ տարրական կրթական աստիճանում տրված լեզվական գրագիտություն և կարողունակություն ձևավորող ***«Լսի հասկանա իրեն ուղղված խոսքը , պատասխանի հարցերին»*** վերջնարդյունքը հիմնական կրթական աստիճանիվերջնարդյունքում զարգանում է հետևյալ կերպ

- **Պատմի լսածի, տեսածի, զգացածի մասին, նկարագրի մարդկանց, երևույթներ, առարկաներ, դեպքեր, իրադարձություններ,**

Ընթերցի տեքստը պահանջվող հնչերանգով , հարցեր առաջադրի , պատասխանի առաջադրված հարցին, մեկնաբանի, փոխանցի զգացողություններ, դուրս բերի հիմնական և թաքնված գաղափարը:

Լեզվական կարողունակության ձևավորման մեթոդական մոտեցումներ

- Լեզվական կարողունակության ձևավորումը հանրակրթական ծրագրի տարրական, հիմնական և միջնակարգ աստիճաններում առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ մեթոդական մոտեցումներով :
- Ցանկալի է, որ տարրական դպրոցում սովորողը աշխարհին ընկալի զգայարաններով, ուստի ուսուցումը պիտի կազմակերպվի՝ զգայարանների վրա հենվելով, դրանք

զարգացնելով և նրանց միջև եղած կապերն ամրապնդելով: Իսկ դրա ամենաարդյունավետ ճանապարհը խաղի վրա հիմնված կրթությունն է, որին մասնակից են բոլոր զգայարանները:

- Եթե մանկավարժական հոգեբանության մեջ երեխայի կյանքի առաջին յոթամյակը բնութագրվում է իբրև զգայարանների և ընկալումների ձևավորման ու զարգացման փուլ, և ուսումնական գործունեությունը ցանկալի է կազմակերպել դրանց շեշտադրմամբ և առաջնահերթությամբ, ապա 10-14 տարեկանում դրանք պիտի շարունակեն զարգանալ գիրտելիքին զուգահեռ:

> ***« Մի առարկա եթե տեսել ենք, լսել ձայնը, շոշափել, հոտոտել, ճաշակել համը, եթե այդ հնարավոր է, և մանավանդ, եթե շինել, կառուցել եք այդ առարկան, այդ դեպքում առարկայի պատկերացումը համարյա անմոռաց էմնում հիշողության մեջ», գրում է Գ. Էդիթյան:***

Միջնակարգ կրթության աստիճանում չանտեսելով տարիքային առանձնահատկությունները՝ կարևոր է զարգացնելքննական մտածողությունը, որովհետև.

- Այս տարիքում դեռահասը սիրում է ամեն ինչին քննադատաբար վերաբերվել, և դասաժամին նրան տրվում է այդ հնարավորությունը,

- Գիտական աշխարհը նոր-նոր է բացահայտվում նրա համար, և հարցերով բացահայտելու հնարավորությունը հասկացման լավագույն ճանապարհից է,

- Այս տարիքը կարիք ունի շփման , և խմբերով աշխատանքը, որտեղ ոչ թե նա պարզապես պնդում է իրենը, այլ լսում է դիմացինի կարծիքը , հակափաստարկներ է հավաքում, համոզում է փաստերով հիմնավորում է իր իմացածն ու հասկացածը, մարդկային ավելի ազատ շփումների տիրապետելու հրաշալի դպրոց է, *համոզի՛ր, որ դու ճիշտ ես,*

- Ճշմարտությունն ինքնուրույն բացահայտելու հնարավորությունը բարձրացնում է դեռահասի ինքնագնահատականը, որի պահանջը նա այնքան ունի,

- ՄտածեԼով աշխատելը կօգնի փակոլոիներից եԼքեր որոնել, որն այնքան անհրաժեշտ է տարիքային այս խմբին, չէ՞ որ նրանք չափազանց զգայոլն են և խոցելի, և հաճախ ջղագրգիռ են դառնում լուծում նոր չգտնելու պատճառով:

Տարիների ուսումնասիրությունը,աշխատանքային գործընթացը, և շփումը աշակերտների հետ ցույց է տվել ,որ աշակերտները ավագ դպրոց ոտք են դնում աղքատ բառապաշարով,բանավոր և գրավոր խոսք կառուցելու համեստ հնարավորություններով:Դասից դուրս հաղորդակցության ,շբումների,զրույցների ժամանակ նրանք բավական ակտիվ են ,անկաշկանդ,կարողանում են իրենց ասելիքը տեղ հասցնել ,ստանալ և կիսվել նոր տեղեկատվությամբ , խոսել իրենց հետաքրքրող թեմաների մասին; Սակայն նույնն աշակերտը դասի ժամանակ շատ հաճախ դժվարանում է ձևակերպել մտքերը , կարծիք և տեսակետ հայտնելլ որևէ թոմայի վերաբերյալ : Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում 10-րդ դասարանի աշակերտներին հանձնարարում ենք, հայտորոշիչ թեստ `ծանոթանալու նրանց գիտելիքներին և կարողունակություններին:Նրանց առաջարկվում էորև է թեմա բառապաշարին ,ստեղծագործական կարողություններին,մտքեր շարադրելու ,տեսածը,լսածը վերարտադրելու ,ունակություններին ծանոթանալու համար: Նրանք գրում են երկու-երեք նախադասություն ,չեն օգտագործում պատկերավորման միջոցներ,բառապաշարը շատ աղքատիկ է:Չեն կարողանում ընտրել ճիշտ բառերև արտահայտություններ:Սակայն երբ դասից դուրս նրանց հետ նույն թեմայով անկածկանդ զրույց ենք անցկացնում ,նրանք կարողանում են հաղորդակցվել:Աշխատանքն ինքնանպատակ չէ և միտված է աշակերտների լեզվական գրագիտության բարելավմանը:Օգնում և սովորեցնում նրանց ճիշտ և գրագետ կառուցել խոսքը ոչ միայն հայոց լեզվի ,այլ նաև մյուս դասաժամերին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ: ԼԵԶՎԱԿԱՆ ԿՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Լեզվական կարողունակության ձևավորումը հանրակրթական ծրագրի տարրական, հիմնական և միջնակարգ աստիճաններում առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ մեթոդական մոտեցումներով

Ցանկալի է, որ տարրական դպրոցում սովորողը աշխարհն ընկալի զգայարաններով, ուստի ուսուցումը ևս պիտի կազմակերպվի՝ զգայարաններիվրա հենվելով, դրանք զարգացնելով և նրանց միջև եղած կապերն ամրապնդելով: Իսկ դրա ամենաարդյունավետ ճանապարհը խաղի վրա հիմնված կրթությունն է, որին մասնակից են բոլոր զգայարանները:

- Եթե մանկավարժական հոգեբանության մեջ երեխայի կյանքի առաջին յոթամյակը բնութագրվում է իբրև զգայարանների և ընկալումների ձևավորման ու զարգացման փուլ, և ուսումնական գործունեությունը ցանկալի է կազմակերպել դրանց շեշտադրմամբ և առաջնահերթությամբ, ապա 10-14 տարեկանում դրանք պիտի շարունակեն զարգանալ գիտելիքին զուգահեռ:

«Մի առարկա եթե տեսել ենք, լսել նրա ձայնը, շոշափել, հոտոտել, ճաշակել համը, եթե այդ հնարավոր է, և մանավանդ, եթե շինել, կառուցել ենք այդ առարկան, կամ նրա նմանը կավից, փայտից կամ մի այլ նյութից, այդ դեպքում առարկայի պատկերացումը համարյա անմոռաց է մնում հիշողության մեջ», գրում է Գ. Էդիլյանը:

Յոթերորդ դասարանից սկսվում է Մայրենիի տրոհումը. այն ուսուցանվում է առանձին առարկաների տեսքով՝ Հայոց լեզու և Գրականություն: Առաջին դասարանից Մայրենին մեկ առարկա ընկալած սովորողի համար բավականին դժվար է երկու նոր, տարբեր առարկաների ուսուցումը: 7-րդ դասարանցին բոլորովին նոր տարիքային խումբ է և աչքի է ընկնում ֆիզիկական և հոգեբանական ընդգծված առանձնահատկություններով:

Բայց միաժամանակ սա այն տարիքն է, երբ երեխան պատրաստ է մտածական գործունեության համար, նա կարող է ընդգրկել մտածողական ավելի մեծ տեսադաշտ, ինքնուրույն դատողություններ անել, վերլուծել և համադրել ստացած գիտելիքները: Մտածական ճիշտ գործունեություն չծավալելու դեպքում կզրկենք երեխային մտածելով աշխատելու բացառիկ հնարավորությունից:

Միջնակարգ կրթության աստիճանում չանտեսելով տարիքային առանձնահատկությունները՝ կարևոր է զարգացնել քննական մտածողությունը, որովհետև.

- այս տարիքում դեռահասը սիրում է ամեն ինչին քննադատաբար վերաբերվել, և դասաժամին նրան տրվում է այդ հնարավորությունը,
- գիտական աշխարհը նոր-նոր է բացահայտվում նրա համար, և հարցերով բացահայտելու հնարավորությունը հասկացման լավագույն ճանապարհներից է,

- այս տարիքը մեծ պահանջ ունի շփման, և խմբերով աշխատանքը, որտեղ ոչ թե նա պարզապես պնդում է իրենը, այլ լսում է դիմացինի կարծիքը, հակափաստարկներ է հավաքում, համոզում և փաստերով հիմնավորում է իր իմացածն ու հասկացածը, մարդկային ավելի ազատ շփումների տիրապետելու հրաշալի դպրոց է. ***համոզի՛ր, որ դու ճիշտ ես,***
- ճշմարտությունն ինքնուրույն բացահայտելու հնարավորությունը բարձրացնում է դեռահասի ինքնագնահատականը, որի պահանջը նա այնքա՛ն ունի,
- մտածելով աշխատելը կօգնի փակուղիներից ելքեր որոնելուն, որն այնքան անհրաժեշտ է տարիքային այս խմբին. չէ՞ որ նրանք չափազանց զգայուն են և խոցելի, և հաճախ ջղագրգիռ են դառնում լուծումներ չգտնելու պատճառով:

Եվ այս ամենի արդյունքում ինքնուրույն և համարձակ քաղաքացիներ են ձևավորվում, որոնք չեն վախենում որոշումներ կայացնելուց և սեփական կարծիքը բարձրաձայն հայտնելուց:

Լեզվական գրագիտության կարողունակության զարգացմանը միտված աշխատանքներն ամեն օրյա են ,հետևողական և շարունակական :Դասից դաս աշակերտը պետք է տեսնի ,զգա ,հասկանաիր լեզվական գրագիտության աճը բառապաշարի ,ուղղագրական և ուղղախոսական գիտելիքների հարստացումը :Դրանք հենց այնպես չեն արվում:Օգտագործելով նաև սովորել սովորելս կարողունակություն աշակերտները ինքնուրույն և մյուսների հետ արդյունավետ սովորում են մաքրում և հսկում իրենց լեզուն ,խոսքը :Եթե ուսումնական տարվա սկզբում աշակերտների մոտ մի տեսակ վախ ,անհարմարություն ,կաշկանդվածություն կար մյուսներից չտարբերվելու ,չառանձնանալու քննադատության առարկա չդառնալու առումով ,ապա ուսումնական տարվա ընթացքում և ավարտին նրանք արձանագրում են ,որ իրենք կարողանում են ավելի հարուսն բառապաշարով ներկայացնել ցանկացած թեմա:Նրանք կարողանում են իրենց գիտելիքները ճիշտ կիրառել,վերլուծել ,կազմակերպել իրենց դատողությունները:Ի վերջո գիտելիքի իմացությունը օգնում է նրանց զարգացնել քննական մտածողությունըև կիրառությունը:

Եզրակացություն և Առաջարկություն

Ռուսաց լեզվի իմացությունը, տիրապետումը հանդիսանում է առավելություն նոր աշխատանքի անցնելիս, մասնագիտական հմտություններ ձևավորելիս:

երիտասարդների կողմից մի քանի լեզուների կիրառումը այլևս ժամանակի պահանջն է:

Այժմ ամենուրեք փնտրված են արհեստավարժ մասնագետները, իսկ արհեստավարժության առաջին ցուցիչը տվյալ ոլորտում կարողունակ լինելն է: Եվ դա ակնառու դրսևորվում է լեզվական գրագիտությամբ: Այն ձևավորվում է տարրական, հիմնական և միջնակարգ կրթության աստիճաններում:

Լեզվական գրագիտության կարողունակության կարևորության շեշտադրումը կնպաստի, որ այն հանրային պահանջարկ դառնա, և ցանկացած ոլորտում անհատի կայացումը կախված լինի նրանից, թե որքանով է տիրապետում լեզվին:

Խմբակների ստեղծում, խմբակները ստեղծվում են, սովորողների առաջարկությամբ, հանրակրթության պետական չափորոշչով սահման ված առաջնահերթություններով, դպրոցի զարգացման նպատակներով: Քանի որ միայն դասաժամի շրջանակներում անհնար է ամբողջովին զարգացնել լեզվական կարողունակությունները առաջարկում ենք այն իրականացնել խմբակների և երկարօրյա դասապրոցեսի միջոցով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

https://nsportal.ru/nachalnaya-shkola/raznoe/2014/11/30/programma-po-russkomu-yazyku-kak-inostrannomu-proekt-dlya-dete-0
rfl.urfu.ru/.../

- Амонашвили Ш." Здравствуйте, дети!": Пособие для учителя/ 2.Предисл. А. В. Петровского. — М., 1983 2. Анисимов О." 3.

3.Развивающие игры и игротехника". Новгород., 1989. 178 с 3. Ариян М.А. Повышение самостоятельности учебного труда школьников при обучении иностранным языкам.